«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 13-1/02

ք.Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 15.11.2017թ. ժամը 17:00

Համաձայն 28.09.2017թ. թիվ 89 գրությամբ՝«Բետոնագործ»ՓԲ ընկերության ներկայացուցիչ Արսեն Հարությունյանից, «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝29.09.2017թ-ին ստացված դիմումը «Սիտտա Գրուպ»ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Արմենակ Աղամյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով,կառավարչի վարքագծի վերաբերյալ,կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում նշված փաստական հանգամանքների քննության համար՝ ս/թ-ի Նոյեմբերի 15-ին ժամը 17.00-ին՝ հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի 02.11.2017թ-ին հետաձգված նիստին.

**ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝**
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանաժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
«Բետոնագործ»ՓԲ ընկերության ներկայացուցիչ Արսեն Հարությունյանը
«Սիտտա Գրուպ»ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Արմենակ Աղամյանը

**ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝**
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձանաժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
«Սիտտա Գրուպ»ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Արմենակ Աղամյանը
Դիմումատու՝ «Բետոնագործ»ՓԲ ընկերության ներկայացուցիչ Արսեն Հարությունյանին պատշաճ ծանուցված և տեղյակ լինելով հանձնաժողովի նիստի,տեղի և ժամանակի մասին, նիստին չեր ներկայացել,չեր ներկայացրել նաև գրավոր առարկություններ կամ դիմումին կից լրացուցիչ փաստաթղթեր, ուստի նիստը անցկացվեց առանց դիմումատուի:

**ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝**
«Բետոնագործ»ՓԲ ընկերության ներկայացուցիչ Արսեն Հարությունյանից «ՍԳԿԿ» ԻԿԿ-ին՝ 28.09.2017թ. թիվ 89 գրության հիմքով՝«Սիտտա Գրուպ»ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Արմենակ Աղամյանի, գործողությունների/անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման,դիմումում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

Մինչև օրակարգի հարցի քննարկման անցնելը հանձնաժողովի անդամ՝Ա.Աղամյանը առաջարկության համար ձայն վերցրեց և ներկայացնելով այն փաստը,որ օրակարգում ընդգրկված է իր,որպես սնանկության գործով կառավարիչի՝ վարքագծերի վերաբերյալ հարցի քննարկում,ինքը որպես հանձնաժողովի անդամ ինքնաբացարկ է հայտարարում և առաջարկեց այս նիստի քվեարկությունները կազմարպել առանց իր ձայնի:

Նիստի մասնակից հանձնաժողովի անդամները քննարկեցին ինքնաբացարկը,ընդունեցին այն ճիշտ և նիստի վարման կանոնակարգին համապատասխան: Հանձնաժողովի նախագահն առաջարկը դրեցին քվեարկության՝

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝**
Կողմ - 4
Դեմ – 0

Չեռնպահ – 0

**ՈՐՈՇԵՑԻՆ**- «Բետոնագործ»ՓԲ ընկերության ներկայացուցիչ Արսեն Հարությունյանի թիվ 89 գրության հիմքով՝«Սիտտա Գրուպ»ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Արմենակ Ադամյանի, գործողությունների/անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման,դիմումում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու և փաստական հանգամանքների քննարկման համար, ս/թ-ի Նոյեմբերի 15-ին՝ հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստով ընդունել հանձնաժողովի անդամ՝Արմենակ Ադամյանի ինքնաբացարկը և սույն նիստում քվեարկությունները կազմակերպել առանց հանձնաժողովի անդամի քվեարկության ձայնի իրավունքի:

**ԼՍԵՑԻՆ՝**
Կարգապահական Հանձնաժողովի նախագահ՝ Տիգրան Հարությունյանը ներկայացրեց, «Բետոնագործ»ՓԲ ընկերության ներկայացուցիչ Արսեն Հարությունյանի թիվ 89 գրությունը, «Սիտտա Գրուպ»ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Արմենակ Ադամյանի հանձնաժողովին ներկայացրած փաստաթղթերը և խնդրեց հայտնել կարծիք առանց դիմումատուների հանձնաժողովի նիստը շարունակելու վերաբերյալ:
Հանձնաժողովի ներկա անդամները քննարկեցին և հայտնեցին կարծիք,որ սույն դիմումի քննարկումը հրավիրված էր 02.11.2017թ-ին,բայց քանի որ այդ օրվա դրությամբ դիմումատուի պատշաճ ծանուցման վերաբերյալ տվյալները բացակայում էին,ուստի նիստը հետաձգվել էր մի այլ հերդի,իսկ այսօր դիմումատուն պատշաճ ծանուցված է հանձնաժողովի նիստի տեղի և ժամի վերաբերյալ և նրա բացակայությունը կարելի է դիտել հանձնաժողովին,բացի իր գրությամբ ներկայացրած փաստական հանգամանքներից,այլ փաստեր չլինելու և ավելացնելու բան չունենալու ապացույց,ուստի նրա բացակայությունը կարելի է ընդունել որպես իր կարծիքը արտահայտող դիրքորոշում,ուստի բոլորը միակարծիք էին,որ նիստը կարելի է անցկացնել դիմումատուի բացակայությամբ:
Հանձնաժողովի նախագահն կարծիք հարցրեց նաև «Սիտտա Գրուպ»ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Արմենակ Ադամյանից,առանց դիմումատուների նիստը անցկացնելու վերաբերյալ:Կառավարիչը հայտնեց այն կարծիքը,որ գերադասելի էր,որ դիմումատու պարտատերը ներկա գտնվեր և անձամբ հայտներ իր կարծիքը կառավարչի գործողությունների վերաբերյալ, բայց իր կարծիքով պարտատերը արդեն բավարված է կառավարչի գործողություններից և դիմում նշվածից բացի այլ բան չունի հայտնելու հանձնաժողովին և եթե նրա բացակայությունը չի խանգարում հանձնաժողովի անդամներին եզրակացության գալու համար,ուստի իրենք նույնպես չի առարկում հանձնաժողովի նիստը առանց դիմումատուների անցկացնելու կարծիքին:

**ԼՍԵՑԻՆ՝**
*Կարգապահական Հանձնաժողովի նախագահ՝ Տիգրան Հարությունյանը նիստը հայտարարեց* բացված և առաջարկեց հանջնաժողովի անդամներին քնարկել «Սիտտա Գրուպ»ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Արմենակ Ադամյանի նկատմամբ «ԿՀ գործունեության և ՍԳԿ-ի կարգապահական վարույթի իրականացման»Կարգի 1.4 կետի հիմքով,կարգապահական վարույթ հարուցելու հարցը:
Հանձնաժողովում նախագահողը հարցը դրեց քվերակության

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝**
Կողմ - 4
Դեմ – 0
Չեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝
«Բետոնագործ»ՓԲ ընկերության ներկայացուցիչ Արսեն Հարությունյանի թիվ 89 գրության հիմքով՝«Սիտտա Գրուպ»ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Արմենակ Ադամյանի, գործողությունների /անգործության/, դիմումում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, հարուցել կարգապահական վարույթ:

ԼՍԵՑԻՆ՝
Հանձնաժողովի նախագահ՝Տիգրան Հարությունյանը ներկայացրեց ստացված գրություն-դիմումը և ներկայացված փաստաթղթերը ,առաջարկեց հանձնաժողովի անդամներին քննարկել դիմումում մեջ նշված հանգամանքները,«Սիտտա Գրուպ»ՍՊ ընկերության սնանկության գործու կառավարիչ՝ Արմենակ Ադամյանի գործողությունների /անգործության/ փաստական հանգամանքները և սնանկության գործով կառավարչի վարքագծի և նրա գործողությունների օրենքին և կանոնակարգերին համապատասխանության նկատմամբ հայտնել կարծիք:
Հանձնաժողովի անդամ՝Հ.Գևորգյանը,առաջարկեց լսել ներկա գտնվող «Սիտտա Գրուպ»ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Արմենակ Ադամյանի բացատրությունները և ուսումնասիրել նրա ներկայացրած փաստարկները:
Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը ձայնը տվեց, «Սիտտա Գրուպ»ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Արմենակ Ադամյանին,ով մասնավորապես նշեց,որ «Սիտտա Գրուպ»ՍՊ ընկերությունը,Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 27.03.2017թ-ի թիվ ԵՇԴ/0034/04/17 վճռով ճանաչվել է սնանկ,նույն դատարանի որոշմամբ սնանկության գործով կառավարիչ է նշանակվել՝Արմենակ Ադամյանը: Նշանակվելուց անմիջապես հետո սնանկության գործով կառավարիչը ձեռնամուխ է եղել իր պարտականությունների և լիազորությունների իրականացմանը,որի հետևանքով պարտատերերի պահանջների գրանցամատյանում գրանցվել են պահանջ ներկայացրած բոլոր պարարտերերը այդ թվում նաև դիմումատուն:
Սահմանված ժամկետներում կազմվել է պարտատերերի պահանջների նախնական ցուցակը տպելով նրա մասին հայտարարություններ թերթում և ԱԶԴԱՐԱՐ ամ,իներնետային կայքում ներկայացվել է դատարանին և պարտատերերին քննարկելու և հաստատելու:
Օրենքով սահմանված կարգով դատարանի կողմից հաստատվել է պարտատերերի վերջնական ցուցակը,որի վճարման ապահովված հերթում գրանցված է նաև դիմումատուն և իր կողմից այդ պահանջի գծով առարկություններ չեն եղել:
Պետք է նշել որ պարտապան ընկերությունը զբաղվում է կապիտալ և ոչ կապիտալ շինարարական աշխատանքներով,որոնք իրականացրել և իրականացնում է կապալի պայմանագրերի հիման վրա այդ թվում նաև մրցույթային կարգով շահած:
Սնանկության վարույթում իր պայամանագրերի կատարումն ապահովվելու և պարտատերերի բոլոր ներկայացված պահանջներին բավարարում տալու նպատակով պարտապանի կողմից սահմանված կարգով և ժամկետներում դատարան է ներկայացվել է ֆինանսական առողջացման ծրագիր և շարունակել է կատարել իր պայմանագրային պարտավորությունները,բնականոն գործունեություն իրականցնելու իրավունքով,այդ թվում նաև «Բիլայն»ընկերության հետ առկա կապալի պայմանագրի շրջանակներում շարունակել է շինարարական աշխատանքները և որպեւ կատարած աշխատանքների տվյալ փուլի ավարտական ակտի հիմքով կատարված աշխատանքների դիմաց ստացել է պայմանագրի արժեքի մի մասը՝12 000 000 ՀՀ դրամի չափով:
«Սնանկության մասին»ՀՀ օրենքի 47-րդ հոդված 2-րդ մասի համաձայան կառավարիչը սնանկության վարույթի այդ փուլում՝սնանկ ճանաչելուց հոտո մինչև լուծարման մասին որոշումը /բնականոն գործունեության/ իրականացնում է հսկողություն,իսկ պարտապանը պարտավոր է գործել կառավարչի համաձայնությամբ:
Վերոնշյալ հսկողության և համաձայնության իրականացման նպատակով պարտապանը գրությամբ տեղեկացրել է հիշատակված պայմանագրի և ստացված դրամական միջոցների վերաբերյալ և խնդրել է թույլտվություն տվյալ գումարները ծախսել ընթացիկ հարկային, ընթացիկ աշխատավարձերի և տվյալ պայմանագրի կատարման համար ձեռք բերված նյութերի

գծով պարտավորությունների մարման համար,պարտավորվելով ներկայացնել դրանց հետագա կատարումն վերաբերյալ հիմնավորող փաստաթղթերը :

Քանի որ ընկերությունը իր պայմանագրերը կնքել էր մինչև սնանկությունը և դրանց իրագործման համար մինչև սնանկությունը իրականացրել էր, գնումներ և աշխատանքներ ու պայմանագրերի իրականացման համար էլ ուներ օրենքով սահմանված իր իրավունքները, կատարվել էր նաև պայմանագրի մեծ մասը և դրա վերջնական ավարտը ապահովվելու ու վերջնական ընդհանուր պայմագրի արժեքը ստանալը ապահովվելու նպատակով,կայացվել է որոշում թույլատրել ընկերությանը օգտագործել այդ գումարը նշված հոդվածներով և կատարել գնումներ պայմանագրով նշված աշխատանքները ավարտելու համար:

Պետք է նշել,որ ընկերության,այդ պայմանագրի շրջանակներում, իրականացրած աշխատանքների շնորհիվ ստացվել են սպասվելիք գումարները,որոնց բաշխման ընթացքում մասնակի բավարարվել է դիմումատու՝«Բետոնագործ»ՓԲ ընկերության պահանջները՝6500000ՀՀ դրամի չափով

Ընկերության կողմից ներկայացված Ֆինանսական առողջացման ծրագիրը մերժվել է դատարանի կողմից և կառավարչի կողմից անհապաղ ներկայացվել է միջնորդություն տնկերության սնանկության գործընթացը լուծարման ճանապարհով տանելու վերաբերյալ:

Դատարանի կողմից քննարկվել է միջնորդությունը և կայավել է լուծարման գործընթաց սկսելու ընկերության գործունեությունը կասեցնելու մասին որոշումներ,որոնց վերաբերյալ հայտարարություն է տպվել մամուլում և ԱԶԴԱՐԱՐ ամ.ինտերնետային կայքում:

Իր կողմից ձեռնարկվել են միջոցներ ընկերության գույքի գույքագրման,այդ թվում նաև դրամական միջոցների,արգելադրման և հաշվապահական հաշվառման փաստաթղթերի հայտնաբերման և ուսումնասիրման ուղղությամբ,որի համար միջնորդություն է ներկայացվել դատարանին ԴԱՀԿԾ-ի միջոցով հետախուզում կատարելու ու հայտնաբերելու համար,քանի որ ընկերության տնօրինության հետ կապը կտրվել է և չի ստացվել գրությունների պատասխանները

Ներկայումս կատարողական վարույթի շրջանակներում կատարվում են հետախուզման աշխատանքներ,որի արդյունքներով կիրագործվի փաստաթղթային ուսումնասիրությունները,այդ թվում նաև հիշատակված՝12 մլ.դրամի նպատակային օգտագործման վերաբերյալ:

Հանձնաժողովի անդամ՝Մ.Մարտիկյանը հարց ուղղեց կառավարչի թե դիմումատուն երբևե դիմել են իրեն պահանջի բավարարման հարցերով և եթե դիմել են ապա ինչ կարգով:

Կառավարիչը պատասխանեց.որ 18.08.2017թ-ին այնուհետև 08.09.2017թ-ին դիմումատուն գրությամբ դիմել է իրեն վերընշված 12մլ.դրամի հետագա բաշխման վերբերյալ տեղեկատվության տրամադրելու համար:Հիշատակված գրություններում ակնկալվող տեղեկատվությունը չի կարող տրամադրվել պարտատիրոջը այդ կարգով,այսինքն կառավարչի կողմից,քանի որ սնանկության վարույթը դատական վարույթ է և դատական վարույթից տեղեկատվություն կամ փաստաթղթեր ստանալը ունի այլ դատավարական կարգ,որը պարտատերը ինքը պետք է իմանար և չպահանջեր կառավարչից իր իրավասություններից դուրս գործողություններ:

Բացի դրանի ինչպես նշեցի իր կողմից գրված գրությունները այդ ժամանակամիջոցում և մինչ օրս մնացել են անպատասխան,այդ թվում նաև տվյալ գումարի բաշխման վերաբերյալ,որի վերաբերյալ հայտնվել է դատարանին և որոշում է կայացվել որոնումները և հարցերի պատասխանները ստանալ ԴԱՀԿԾ-ի միջոցով,հետախուզման արդյունքներով,այդ թվում նաև պարտապանի:

Հանձնաժողովի անդամ՝Հ.Գևորգյանը հարց ուղղեց կառավարչի թե իր կարծիքով ինչ կպատահեր,եթե նշված գումարի օգտագործման հնարավություն չտրվեր պարտապանին:

Սնանկության գործով կառավարիչ՝Ա.Ադամյանը պատասխանեց,որ առաջին հերթին այդ գումարի ծախսերը արդեն պլանավորված էին ընկերության կողմից,մինչև սնանկությունը և այդ ծախսերի կատարման ժամանակ,պարտապանը չեր կարող իմանալ,որ իր նկատմամբ սնանկ ճանաչելու դիմում է ներկայացվելու ու սկսվելու է սնանկության վարույթ,ուստի նա կատարել է իր պայմանագրային պարտավորությունները,որի արդյունքում էլ,ըստ պայմանագրի մասնակիորեն ստացել է գումար:Երկրորդ պայմանագրով նախատեսված որոշակի էտապներում, մասնակի վճարումները,ըստ էության միտված են ընթացիկ պարտավորությունների կատարման հնարավորություններ ստեղծելու և հաջորդ փուլի նախապատրաստական աշխատանքների և գնումների համար և հաշվարկված են այդ չափով,իսկ աշխատանքների ավարտումով նախատեսված է վճարել ընդհամենը գումարը,կարելի է ասել որ այդ գումարը կանխավճարային տեսք ունի,որը պետք է ստեղծեր հնարավորություն աշխատանքների ավարտման համար:

Երրորդ թույլատրելով կատարել անհրաժեշտ ծախսերը,հնարավորություն էր ստեղծվում ստանալ աշխատանքների արժեքը,որպիսի գումարը կարելի կլիներ արդեն բաշխել պարտատերերին, որը և կատարվել է հետագայում:

Չորրորդ եթե չթույլատրվեր կատարել անհրաժեշտ ծախսերը,ապա պայմանագրի կատարումը կվտանգվեր և կազմակերպությունը կրելով վնասներ,այդ վնասները կարող էր վերագրել սնանկության գործով կառավարչի կամայական գործողություններին,որը օրենքով թույլատրելի չէ:

Այսպիսով վերոնշյալը հաշվի առնելով տրվել է թույտվություն և իր կարծիքով կայացվել է ճիշտ որոշում,որի արդյունքներով մարվել է պարտավորություններ,այդ թվում նաև դիմումատուի:

Հանձնաժողովի անդամները քննարկեցին հարցը ,մասնավորապես հանձնաժողովի անդամ Հ.Մարտիկյանը հայտնեց այն կարծիքը,որ ներկայացված դիմումում նշված փաստերի և կառավարչի կողմից ներկայացված բացատրությունների և կից փաստաթղթերի համադրումից պարզ է որ դիմումատուն տեղյակ է սնանկության վարույթից,կառավարչի իրավունքներից և պարտականություններից և իրենց կարծիքով գումարների առկայության պարագայում,փորձում են կառավարչի գործողություններից բողոքելով ստիպել կառավարչին խախտելով պարտապանի իրավունքները,ամեն գնով ստանալ իրենց պահանջը ամբողջությամբ,առանց վարույթի մյուս մասնակիցների իրավունքները կամ պարտականությունները հաշվի առնելով:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը համաձայնեց արտահայտած կարծիքին և ավելացրեց,որ սնանկության վարույթում «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասը կարգավորում է սնանկ ճանաչելուց մինչև լուծարման վարույթ սկսելը,պարտապանի իրավասությունները և դրանց իրականացման եղանակը /կառավարչի հսկողություն և համաձայնություն/ ,բայց հոդվածը չի կարգավորում կառավարչի հսկողության իրականացման եղանակները,որը պրակտիկայում իրագործվում է կառավարիչների կողմից տարբեր վարույթներում տարբեր եղանակներով և միշտ առկա է պարտապանի բնականոն գործունեությունը խաթարելու և նրան վնասներ պատճառելու հնարավորությունը և վտանգը կառավարչի համար:Այդ առումով պետք է նաև դիտարկել կատավարչի պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրի ներկայացման օժանդակության կամ նվազագույնը պարտապանի ֆինանսապես առոջանալուն չխոչնդոտելու պարտականությունը,որի կատարման համար տվյալ գործով կառավարիչը չի լուծել գործող կիսատ պայմանագրերը,որի համար չուներ նաև հիմքեր,ուստի իր գործողությունները պետք է միտված լինեին այդ պայմանագրերի ավարտման և դրանց արդյունքով պահանջների բավարարմանը,որը և կառավարիչը այս պարագայում կատարել է և կարելի է արձանագրել որ արդյունավետ:

Եթե դիտարկենք առողջացման ծրագրի հաստատման պարագան,ապա կառավարչի գործողությունները ամբողջությամբ արդարացված կլինեին և պարտատիրոջ այս բողոքը ըստ էության միջանկյալ ծախսերի համար ստացված գումարով իր պահանջը չբավարարելու վերաբերյալ,չեր լինի քանի որ շատ ավելի մեծացած կլիներ պահանջի բավարարման հնարավորությունը, իսկ լուծարման գործընթացում այդ հնարավորությունը փոքրանալով ծնել է մտավախություն պարտատիրոջ մոտ իր պահանջի բավարարման հնարավորությունների վերաբերյալ:

Բայց այնուամենայնիվ կառավարչի գործողությունները տվյալ գործարքի վերաբերյալ եղել են մտածված,հիմնավոր և արդյունավետ,իրավաչափ են և կատարվել են օրենքով սահմանված իր լիազորությունների իրականացման շրջանակներում:

Ինչ վերաբերվում է կառավարչի գործողություններին կամ անգործության մեղադրանքներին ապա դրանք միտված են ստիպել կառավարչին խախտելով պարտապանի իրավունքները,ամեն գնով ստանալ իրենց պահանջը ամբողջությամբ,առանց վարույթի մյուս մասնակիցների իրավունքները կամ պարտականությունները հաշվի առնելով:

Այսինք ՍԳ կառավարիչ՝Ա.Ադամյանի գործողությունները բխել են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների կատարման անհրաժեշտությունից և հիմնավորված են 29-րդ հոդվածի 1-ին մասի /զ/;/թ//ժա/ կետերով իրեն վերապահված լիազորություններով, իսկ փաստական հանգամանքները ուսումնասիրությունից հետո պարզ է,որ հարուցված կարգապահական վարույթ անհրաժեշտ է կարճել,ՍԳ կառավարիչի մեղքի բացակայության պատճառաբանությամբ:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյան առաջարկը դրեց քվեարկության՝

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 4
Դեմ – 0
Չեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝
1. 28.09.2017թ. թիվ 89 գրությամբ՝«Բետոնագործ»ՓԲ ընկերության ներկայացուցիչ Արսեն Հարությունյանից, «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝29.09.2017թ-ին ստացվածդիմումի հիմքով՝ «Սիտտա Գրուպ»ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ Արմենակ Աղամյանի գործողությունների /անգործության/, սնանկության գործով կառավարչի վարքագծի և նրա գործողությունների օրենքին և կանոնակարգերին համապատասխանության նկատմամբ հարուց ված կարգապահական վարույթը կարող է կարճվել,քանի որ կառավարչի գործողությունները չեն պարունակում օրենքի կամ վարքագծի կանոնների խախտումներ և բխել են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների կատարման անհրաժեշտությունից և հիմնավորված են 29-րդ հոդվածի 1-ին մասի /գ/;/թ//ժա/ կետերով իրեն վերապահված լիազորություններով ու կարգապահական վարույթի ընթացքում նրա մեղքը ապացուցող փաստերի /ապացույցների/ բացակայության պատճառաբանությամբ:
2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝ Մ.Մարտիկյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Գևորգյան